



«FAMILY INSURANCE»

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Խմբագրություն՝ խմբ. ԱՇՁ
(Ակտիվի դաս՝ հրապարակային)

1. ԻՆՉ Է «FAMILY INSURANCE» ԾՐԱԳԻՐԸ

«FAMILY INSURANCE» ծրագիրը դժբախտ պատահարներից ապահովագրություն է նախատեսված միայն ֆիզիկական անձանց համար:

2. ՈՎՔԵՐ ԵՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՎՈՒՄ

Ծրագրի շրջանակներում ապահովագրվում է մինչև 1-75 տարեկան ցանկացած ֆիզիկական անձ և վերջինիս հետ ընդհանուր տնտեսություն վարող ընտանիքի անդամները (կինը/ամուսինը, ծնողները, ամուսնու/կնոջ ծնողները, քույրը, եղբայրը, զավակը, զավակի կինը/ամուսինը):

3. ԻՆՉ ՌԻՍԿԵՐԻՑ ԵՔ ԱՊԱՀՈՎԱԳՐՎՈՒՄ

«ԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔ» ծրագրի շրջանակներում ապահովագրվում եք հետևյալ ռիսկերից՝

- մարմնական վնասվածքներ՝ դժբախտ պատահարի հետևանքով,
- հանկարծակի սուր թունավորում,
- հաշմանդամության կարգավիճակի ձեռքբերում՝ դժբախտ պատահարի հետևանքով,
- մահ՝ դժբախտ պատահարի հետևանքով, այդ թվում՝
 - շնչահեղձումից՝ շնչուղիներ օտար մարմին ընկնելուց,
 - ջրահեղձումից,
 - անաֆիլակտիկ շոկից,
 - մարմնի գերսառեցումից:

Ապահովագրական հատուցումներն իրականացվում են հետևյալ սահմանաչափերով՝

- մարմնական վնասվածքների և սուր թունավորման դեպքում՝ բժշկի ցուցումով փաստացի կատարված բժշկական ծախսերի չափով, բայց ոչ ավել, քան ապահովագրական գումարի 50%-ը,
- Հաշմանդամության 1-ին խմբի ձեռքբերման դեպքում՝ Ապահովագրական գումարի 100%-ի չափով,



- Հաշմանդամության 2-րդ խմբի ձեռքբերման դեպքում՝ Ապահովագրական գումարի 75%-ի չափով,
- Հաշմանդամության 3-րդ խմբի ձեռքբերման դեպքում՝ Ապահովագրական գումարի 50%-ի չափով,
- «Հաշմանդամ էրեխա» կարգավիճակի ձեռքբերման դեպքում՝ Ապահովագրական գումարի 50%-ի չափով,
- Մահվան դեպքում՝ Ապահովագրական գումարի 100%-ի չափով:

4. Ի՞ՆՉ ՓԱԹԵԹՆԵՐ Է ԱՌԱՋԱՐԿՈՒՄ ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍԸ

ՏԱՐԲԵՐԱԿ 1

Ապահովագրական ծածկույթ՝ **500 000 ՀՀ դրամ**

Ապահովագրավճար՝ **5 000 ՀՀ դրամ***

ՏԱՐԲԵՐԱԿ 2

Ապահովագրական ծածկույթ՝ **2 000 000 ՀՀ դրամ**

Ապահովագրավճար՝ **12 000 ՀՀ դրամ***

* Փաթեթներով սահմանված ապահովագրավճարները նախատեսված են մինչև 5 /ներառյալ/ անձի ապահովագրության համար: Յուրաքանչյուր փաթեթում կարող են ներառվել լրացուցիչ ընտանիքի անդամներ /մինչև 3 անձ/՝ յուրաքանչյուր անձի համար վճարելով լրավճար՝

✓ ՏԱՐԲԵՐԱԿ 1-ի դեպքում՝ 1 000 դրամ,

✓ ՏԱՐԲԵՐԱԿ 2-ի դեպքում՝ 2 000 դրամ:

5. Ի՞ՆՉ ՏՎՅԱԼՆԵՐ ԵՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ապահովադրի անձը հաստատող փաստաթուղթ,

6. ԾՐԱԳՐԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Ողջ ընտանիքին ապահովագրելու հնարավորություն՝ ցածր գնով,
- 1-75 տարեկան անձանց ապահովագրելու հնարավորություն,
- Պաշտպանություն՝ սկսած օրական 7 դրամից:

Ծրագիրը կարգավորվում է Ընկերության Խորհրդի կողմից հաստատված «Դժբախտ պատահարներից ապահովագրության պայմաններ»-ով: